ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԸ

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Միքայել Նալբանդյանի գրական հարուստ ժառանգությունը լայնորեն ուսումնասիրված է հայագետների կողմից։ Սակայն, ցավոք, պետք է նշել, որ նրա աշխարհայացքի ինտերնացիոնալիզմը հատուկ ուշադրության առարկա չի դարձել։ Մեր նպատակն է փորձել համառոտ գծերով ընթերցողի ուշադրությունը հրավիրել Նալբանդյանի աշխարհայացքի այս կարևոր կողմի վրա։

Արևելյան Հայաստանի, ինչպես և ռուսական կայսրության այլ ծայրերկրների ժողովուրդների XIX դ. երկրորդ կեսի ազատագրական շարժումները և նրանց գաղափարախոսությունը համառուսական ազատագրական շարժման անքակտելի մասն են։ Ընդգծած ինքնակալության կողմից ճնշված ազգերի ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևերի, իսկ որոշ մասնավոր հարցերում նույնիսկ բովանդակության յուրօրինակությանը, բուրժուադեմոկրատական հեղափոխության խնդիրների լուծման՝ ցարիզմի սապալման, ճորտատիրական իրավունքի և ազգային ճնշման ոչնչացման հարցերում՝ ճնշված ժողովուրդների սոցիալական ո. ազգային արմատական շահերը լիովին համընկնում էին ռուս ժողովրդի շահերին, որ և հանդիսանում էր ռուսական կայսրության մեջ բնակվող բոլոր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի քաղաքական միավորման սոցիալական հիմքը։

Հայ ժողովուրդը բացառություն չէր կազմում։ Նրա ձևավորվող ազգային-ազատագրական շարժումը ևս հենարան էր փնտրում ցարիզմի ու կալվածատերերի դեմ ուղղված համառուսական ազատագրական շարժման մեջ։ Մեր ազգային դեմոկրատական շարժման առաջնորդ Միքայել Նալբանդյանը այդ ձգտման առաջին դրսևորողն էր։ Լինելով Խաչատուր Աբովյանի դեմոկրատական ժառանգության կտակակատարը, Նալբանդյանը իր մեջ մարմնավորել էր հայ ժողովրդի թե՛ դարավոր ազատագրական պայքարի պաշտամունքը և թե՛ գալիք սերունդների հեղափոխական ոգին։ Սոցիալական խորաթափանց մտքով գրված նրա աշխատությունները տոգորված էին հասարակության հեղափոխական վերափոխման գաղափարներով։ Հայ իրականության մեջ Նալբանդյանն առաջինը խիզախեց բարձրացնել հեղափոխության դրոշը, ազդեցության խոր հետքեր թողնելով ոչ միայն իր դարաշրջանի, այլև գալիք սերունդների մտքի զարգացման վրա։

Վ. Ի. Լենինը հեղափոխական դեմոկրատներին դասում էր Ռուսաստանի առաջադեմ մտքի այն ներկայացուցիչների ճվին, որոնք չտեսնված վայրենի ու ռեակցիոն ցարիզմի ճնշման տակ ագահությամբ որոնում էին ճիշտ թեորիա, «զարմանալի ջանասիրությամբ և խնամքով հետևելով Եվրոպայի ու Ամերիկայի ամեն տեսակ և յուրաքանչյուր «վերջին խոսքին» այդ բնագավառում»[1],

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 11։

Այդ խորհող ու քննող «որոնողների» մեջ Նալբանդյանը հավասարներին հավասար էր։

Արևելյան Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելը նոր փուլ հանդիսացավ երկրամասի ու ռուսական կայսրության մյուս ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության մեջ։ Ռուսաստանին միանալը դարձավ նրանց մերձեցման և դարավոր բարեկամության ամրապնդման նախադրյալ։ Այդ հարաբերությունների ստեղծման գործում մեծ դեր էին խաղում ոչ միայն տարածքների ընդհանրությունը և այն սոցիալ-տնտեսական ընդհանուր պայմանները, որոնցում նրանք ապրում էին, այլև Ռուսաստանի հասարակական առաջադիմական միտքը, որի բարերար ազդեցության ներքո տասնամյակներ շարունակ զարգանում էր նաև հայ ժողովրդի առաջադիմական հասարակական միտքը։

Նալբանդյանը քաղաքական պայքարի ասպարեզ իջավ այն ժամանակ, երբ «հասարակական բոլոր հարցերը,— ինչպես մատնանշել է Վ. Ի. Լենինը,— հանգում էին ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների դեմ մղվող պայքարին»[2]։ Հեղափոխական դեմոկրատների գաղափարախոսության հիմքում ընկած էր այս հարցերին պատասխան տալու խնդիրը։ Ազգային հեղափոխական դեմոկրատների գաղափարախոսության մեջ, բնական է, որ ազգային հարցը (լայն առումով) հասարակական կարգի բոլոր հարցերի մեջ առաջնակարգ տեղ էր գրավում և այն կարևոր օղակներից մեկն էր, որը նրանց կապում էր ռուս հեղափոխական դեմոկրատների հետ։ Կապում էր, որովհետև ռուս հեղափոխական դեմոկրատների աշխարհայացքի հիմքում ընկած էր ինտերնացիոնալիզմը, ճնշված ազգերի ազատագրության գաղափարախոսությունը։

Ռուս հեղափոխական դեմոկրատները չէին շփոթում ռոմանովների Ռուսաստանը ռուս ժողովրդի հետ և դիմելով ցարական ինքնակալության կողմից ճնշված ժողովուրդների բանականությանը, նրանց հույս էին ներշնչում, որ կգա օրը, երբ ժողովուրդների բռնի միասնությունը իր տեղը կզիջի ազատ միասնությանը՝ հիմնված հավասարության և բոլոր ազգերի ինքնակայության ճանաչման վրա։ Ա. Գերցենը նրանց կոչ էր անում հեղափոխական Ռուսաստանը, ռուս ժողովրդին չշփոթել «Աննայի կրծքանշանով ագիտատորների Ռուսաստանի հետ»։ «Բարեբախտաբար,— գրել է նա 1860 թ.,— Ձմեռային պալատն ամբողջ Ռուսաստանը չէ, և նույնիսկ ամբողջ Պետերբուրգը չէ... ուրիշ Ռուսաստան է բարձրանում՝ պալատից դուրս, աստիճանացուցակից դուրս Ռուսաստանը։ Ուրիշ Ռուսաստանը ողջունում է ձեզ որպես իր եղբայրների, ձեզ իր ձեռքն է մեկնում. դե՛, նրան մի շփոթեք այդ բոլոր թաղային պրոպագանդիստների, Աննայի կրծքանշանով ագիտատորների, իսկական պետական ուխտավորների ձեռքերի հետ, որոնք Երուսաղեմ կամ Աթոսի լեռ մեկնելիս ճանապարհին ձեզ մոտ են անցնում»[3]։

Նալբանդյանը խորապես ըմբռնում էր երկու Ռուսաստանների գոյության փաստը և պայքարում էր իր ժողովրդի բախտը Ձմեռային պալատից դուրս գտնվող Ռուսաստանի հետ, ռուս ժողովրդի հետ կապելու համար։

---

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 2, էջ 650։

[3] А. И. Герцен, Полн. собр. соч. и писем, т. VII, Пг., 1917, էջ 257; т. X, Пг., 1919, էջ 437։

Քննադատելով ցարական կառավարության դաժանությունները բուն ռուս ժողովրդի նկատմամբ, Նալբանդյանը հստակորեն ընդգծում էր ռուս ժողովրդի և ինքնակալության կողմից ճնշվող մյուս ժողովուրդների պատմական ճակատագրերի ընդհանրությունը։ «Ռուսական ազգը,— գրում էր նա,— ...կուսակից է ստրուկներին», ավելացնելով՝ «և հառաջընթաց ազնիվ կուսակցության»[4]։

XIX դ. 50-ական թվականների վերջերին Նալբանդյանի աշխարհայացքում այլևս չկար այն խարխափանքը, որը հատուկ էր իր նախորդներին, որոնք իրենց լիբերալ, իսկ երբեմն էլ գաղափարապես չտարորոշված հայացքների համար հենակետեր որոնելով սոցիալական տարբեր գաղափարների մեջ՝ փոշիացան այդ որոնումներում։ Նալբանդյանը չտատանվեց դեմոկրատիզմի և լիբերալիզմի միջև, չփնտրեց հաշտության եզրեր նրանց միջև։ «Չէ կարելի միևնույն ժամանակ երկու ճանապարհ գնալ, միմյանց հակառակ ուղղությամբ»,— գրում էր Նալբանդյանը։ Եվ նա, իր խոսքերով ասած, վճռաբար ոտք դրեց «նոր սահմանագլխի վերա, ուր մանուկ առուգությամբ ծածանում է հառաջընթացների դրոշակը»[5]։ Նա աներկյուղ կանգնեց հեղափոխական դեմոկրատիզմի դիրքերում։ Փույթ չէ, որ այդ դեմոկրատիզմն իր ժամանակի թելադրանքով շատ խնդիրներում սահմանափակված էր ուտոպիական սոցիալիզմով։

Հարկավ մենք չենք կարող դատել Նալբանդյանի, և առհասարակ հեղափոխական դեմոկրատների, պատմական ծառայությունների մասին նրանով, «թե ինչ չեն տվել» նրանք «ժամանակակից պահանջների համեմատությամբ», այլ, ինչպես սովորեցնում է Վ. Ի. Լենինը, պետք է դատենք «նրանով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»[6]։

Ելակետ ունենալով պատմական գործիչների գնահատման լենինյան այս միակ ճիշտ ցուցումը, մեր պատմագիտությունը Նալբանդյանին գնահատում է որպես չերնիշևյան տիպի հետևողական և մարտական դեմոկրատ, չնայած նրա հեղափոխական դեմոկրատիզմի հայտնի սահմանափակվածությանը։

Ճորտատիրական կարգերի անկումը առաջ բերեց շրջադարձ Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում։ Ռեֆորմի կալվածատիրական բնույթը էլ ավելի բևեռացրեց դասակարգերի հակամարտությունը։ «Ճորտատիրական իրավունքի նոր կառուցվածքում,— գրում է այդ առթիվ վրաց վաթսունական Ն. Նիկոլաձեն՝ Գերցենի «Կոլոկոլի» էջերում,— չդիտես թե ինչին զարմանաս՝ կառավարության հանդգնությանը արդյոք, որ այդ աստիճան արհամարհում է ժողովրդի առողջ բանականությունը, թե և՛ մեկին, և՛ մյուսին՝ միանգամից... Առանց հողի, առանց մի պատառ հացի, առանց որևէ աշխատանք գտնելու հնարավորության գյուղացին պետք է նախապես համաձայնվի բոլոր հնարավոր և անհնարին պայմանների հետ, որ առաջարկում են կալվածատերերը... Եվ այդպիսի վիճակը մեզանում կոչվում է կամավոր համաձայնություն... Այստեղ արդեն հարկ է խմել ազատության ողջության կենացը։ Հարց է առաջանում, թե հապա որտե՞ղ է ճորտային վիճակի ոչնչացումը»[7]։

---

4 Մ. Նալբանդյան, ՍՀԺ, հ. III, Երևան, 1940, էջ 60։

5 Նույն տեղում, հ. II, Երևան, 1948, էջ 303։

6 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 2, էջ 220։

7 «Колокол», 7. VII. 1865.

Իսկ Նալբանդյանը հետևելով Չերնիշևսկուն ավելացնում էր, որ եթե ճորտ գյուղացին «յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չքարոզվի», ապա նա «կացինով կվճռե գործը»[8]։

Դասակարգային սրվող պայքարը, այսպիսով, դարձել էր հասարակական կյանքի հիմնական բովանդակությունը։ Այդ գերազդեցիկ ուժը նեցուկ հանդիսացավ դեմոկրատական պայքարի և հեղափոխական մտքի զարգացման համար։ Վ. Ի. Լենինը հենց այս փոփոխությունների հետ էր կապում Ռուսաստանում ազատագրական շարժման երկրորդ էտապը։

Բուրժուական ռեֆորմները, հեռու մնալով սոցիալական արմատական խնդիրների լուծումից, փոփոխություններ չմտցրեցին ժողովուրդների նաև իրավական կյանքում։ Ցարիզմի ազգահալած քաղաքականությունը և մեծապետական շովինիզմը առավել մերկապարանոց դարձան։ Տարիներ անց Վ. Ի. Լենինը փաստարկում էր, որ «Ռուսաստանում բնակչության կեսից ավելին, գրեթե երեք հինգերորդականը (ճշգրիտ՝ 57%-ը) ենթարկվում է տզգային ճնշման, նրանք զուրկ են մինչև անգամ մայրենի լեզվի ազատությունից, նրանց բռնի կերպով ռուսացնում են»[9]։ Սոցիալական և ազգային ճնշում—ահա այն կնճիռը, որի լուծումը հնարավոր էր միայն համաժողովրդական սոցիալական պայքարի և ազգային-ազատագրական շարժումների միաձուլման միջոցով։

Այսպիսով, XIX դ. 50—60-ական թվականներին ազգային հարցը Ռուսաստանի հասարակական կյանքի ասպարեզում երկրորդական հարց չէր և չէր կարող չզբաղեցնել հեղափոխական դեմոկրատների միտքը։ Ազգային հարցի խնդիրը նրանք լծորդում էին քաղաքական և սոցիալական հեղափոխության հեռանկարների հետ, իսկ դեմոկրատիայի լագերին պատկանելու կարևորագույն պայմաններից մեկը համարում ազգային ճնշման դեմ մղվելիք անհաշտ պայքարի անհրաժեշտության ընդունումը։

Ցարիզմի ազգային քաղաքականության բարեփոխման անհրաժեշտությունը զգում էին նաև ռուս լիբերալները, բայց չպիտի կարծել, թե սրանք դեմ էին ցարիզմի ռուսիֆիկատորական քաղաքականությանը։ Նրանք հանդես էին գալիս ցարի վրիպումների դեմ և աղերսում էին «ինքնակալական» ռեֆորմներ, որոնք, լիբերալ Ն. Մելգունովի կարծիքով, կնպաստեին ոչ թե «արտաքին, այլ ներքին ռուսիֆիկացմանը»[10] և կհամապատասխանեին բուրժուական ռեֆորմների ոգուն։ Ռուս լիբերալների այս քսությունը ընդհանուր ոչինչ չուներ ռուս ժողովրդի իսկական ազգային գաղափարների հետ։

«Իսկական ազգային գաղափարները,— նշել է Ֆ. Էնգելսը,— այսինքն՝ այն գաղափարները, որոնք համապատասխանում են տնտեսական գործոններին... այն գործոններին, որոնք տիրապետում են համապատասխան երկրում, միևնույն ժամանակ միշտ հանդիսանում են նաև իսկական ինտերնացիոնալ գաղափարներ»[11]։ Հեղափոխական դեմոկրատների ազգային գաղափարները հենց այդպիսի իսկական ինտերնացիոնալ գաղափարներ էին։

---

8 Մ. Նալբանդյան, Երկ, հ. III, էջ 61։

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 329։

10 Տե՛ս Ш. М. Левин, Очерки по истории русской общественной мысли, Л., 1974, էջ 359, 361։

11 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 33, էջ 374։

Ն. Չերնիշևսկին և նրա հետևորդները խոր ըմբռնողությամբ էին վերաբերվում դեպի ոչ ռուս ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, հանդես էին գալիս նրանց ոտնահարված իրավունքների պաշտպանությամբ։ Քննադատելով անգլիական գաղութարարներին, բայց նկատի ունենալով նաև ռուսական ցարիզմը, Չերնիշևսկին գրել է. «Ուրիշ ժողովրդի, որ վրդովված է օտար տիրապետության դեմ, կախվածության մեջ պահել, ժողովրդին անկախություն չտալ միայն նրա համար, որ դա սգտակար է թվում ռազմական հզորություն և ուրիշ երկրների վրա քաղաքական ազդեցություն ունենալու համար—դա նողկալի է»[12]։ Նույնպիսի զայրույթով Նալբանդյանը գանակոծում է փոքր ազգերի ճնշման ցարական քաղաքականությունը։ Ծաղրելով ազգերի այսպես կոչված «հավասարակշռության» և «իրավունքի» բուրժուական փարիսեցիական պրոպագանդան, նա իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ, որը դարձավ արթնացող հայ ռազնոչին երիտասարդության սիրելի դիրքը, գրում է. «Եթե հավասարակշիռ և իրավունք կա տերության մեջ, ուրեմն նույն կշիռը և նույն իրավունքը պիտի լինի տերության և նոցա ստրկացած ազգերի մեջ։ Դու կամենում ես քո հավասարակշիռը պահել, և այն, իրավունքի անունով. բայց ինձ, որ բնավին օտար եմ քեզ և ամենևին վերաբերություն չունիմ քո հետ, ի՞նչ պատճառով, հակառակ իմ կամքին, առնում ես ու բռնությամբ դնում ես քո կշռի թաթի մեջ։ Ուրիշ տերության հետ խոսում ես իրավունքի անունով, իսկ իմ վերաբերությամբ ինչի՞ համար ոտքի տակ ես կոխում նորան և անիրավում ես չարաչար»[13]։

Դժվար չէ նկատել Չերնիշևսկու և Նալբանդյանի մտքերի հարազատությունը, որը բխում էր նրանց ընդհանուր աշխարհայացքի ինտերնացիոնալիզմից։ Ռուս հեղափոխական դեմոկրատները կայսրության փոքր ազգերի ճնշման վերացումը համարում էին բուն ռուս ժողովրդի սոցիալական ազատագրության անհրաժեշտության պայման։ Իր հիմքում դա դասակարգային պայքար էր, որը խթանում էր ժողովուրդների քաղաքական ինքնագիտակցության խորացումը։ Այդ նույն նպատակին էր ծառայում Նալբանդյանի պայքարը ազգային սնապարծության և ազգային էգոիզմի դեմ։ Դա չէր խանգարում, ընդհակառակը, պայմանավորում էր նրա իսկական հայրենասիրությունն ու ազգային հպարտությունը։ Նալբանդյանը խոսքով ու գործով ապացուցելով, որ ինքը ազգի «էական օգուտին ղոհել» է և պիտի ղոհե ամեն բան, առիթը բաց չէր թողնում մերկացնելու ազգի թշվառությունները սրբագործող «սուտ ազգասերներին», որոնք «յուրյանց սերը դեպի ազգը հայտնում են նորա պակասությունքը քողարկելով»[14]։ «Սուտ, խարդախ, երեխայական գովասանությունը մահադեղ էր ազգին»[15],— այնուհետև գրում է նա։ Իսկ ահա թե իր «Հիշատակարանում» Նալբանդյանն ինչպես է արտաբերում «սուտ ազգասերի» ռեակցիան, երբ ճշմարտության «ձայնը հասնելով նրա ականջին, վշտացնում է նորան». «այս ի՞նչ բան է, մեզ մինչև այժմ գովել են, պատվել են, այժմ մի քանի պարոններ (Նալբանդյանն այստեղ առաջին հերթին

12 Н. Г. Чернышевский, ПСС, т. VI, М., 1949, էջ 105։
13 Մ. Նալբանդյան, երկ, հ. III, էջ 90։
14 Նույն տեղում, հ. II, էջ 304։
15 Նույն տեղում, հ. I, էջ 365։

ի նկատի ուներ իրեն—Գ. Գ.) բոլորովին այլ ուղղությամբ վարվում են մեր հետ. ի՞նչու բացում են մեր սակասությունքը, ի՞նչու հրապարակում են մեր վերքերը... մեք առողջ ենք, հիվանդ չենք, մեղ դեղ չէ հարկավոր»։ «Այս պատճառով,— եզրակացնում է Նալբանդյանը,— ճշմարտությունը հնչում է հայոց ազգի ականջին որպես ձայն բարբառո հանապստի»[16]։ «Հայերը չկամին այս բանի վերա մտածել. նորանց զովում են խաբեբա մարդիկ և նոքա ինքնամոռացության մեջ քնում են խորը»[17]։

Նա ցավն ի խոր սրտի ծաղրում էր ազգային պորտաբույծին, որը «տալ չդիտե, պահանջել սորված է. չի ցաներ, հնձելը արդարությամբ կպահանջե» և ավելացնում. «ով որ ազգի համար չէ ծներ, ազգի և եկեղեցու անդամ չէ»[18]։

Ազգի ցեցերի դեմ իր հանդուգն ելույթներով Նալբանդյանը նվաճում էր նորանոր հակառակորդներ, բայց իրեն մխիթարում էր Եզնիկ Կողբացու ասույթով, թե «եթէ զանարժանն ըստ պիտոյիցն ոչ յանդիմանես, մի՛ լինիր վարդապետ»[19]։

Բերված մտքերը անցողիկ չեն եղել Նալբանդյանի համար։ 1860 թ. դեկտեմբերի 19-ին «Մեղուի» խմբագրին հասցեագրած նամակում նա գրում է. «Ամենայն ազգային անդամ ինչ չափով պարտական էր սիրել յուր ազգը, նույն չափով պարտական է նշավակել և սպանել նորա պակասությունքը, որպեսզի ազգությունը ավելի մաքուր շրջանակի մեջ հանդիսանա ընդհանուր մարդկության առջև...։ Ոչ երբեք պիտի հառաջանա ազգը, հետևելով հին խելքերի դրության»[20]։

Նալբանդյանը զայրույթով նշավակում էր նրանց, որոնք իրենց ազգի շալակն ելած ազգի հայրապետներ էին հորջորջվում, որոնք ազգը իրենց «ժառանգությունն» էին համարում։ «Ազգը,— դրում էր նա,— ժառանգություն տրված չէ Պողոսին կամ Նիկողոսին, որ ինչպես կամենան այնպես խաղան ազգի հետ»[21]։

Վ. Բելինսկու նման Նալբանդյանն էլ ազգը համարում էր հավաքական անձնավորություն։ Իր «Նկատողությունք» հոդվածում, որը տպագրվեց 1858 թ. «Հյուսիսափայլում», նա դրում է. «Ազգը պիտո է ունենա ազգություն, այդ ազգի անձնավորությունն է. ինչպես մարդ չէ կարող լինել առանց անձնավորության, նույնպես ազգը չէ կարող լինել առանց ազգության»։ (Փակագծում կարդում եմ Բելինսկու գնահատականը. «Ինչ որ մարդն է առանց անձնավորության, նույնն է ժողովուրդն առանց ազգության»)[22]։ Եվ եթե,— շարունակում է Նալբանդյանը,— պատահում է տեսանել մի մարդ առանց անձնավորության կամ ազգ առանց ազգության, այդ մի ողորմելի և թշվառ Երևույթ է ունօգուտ յուրյան և ուրիշներին... Մի ազգ, որ կորուսանում է իր ազգությունը, դուրս է ընկնում այն կազմվածքից որպես մի փտած անդամ»[23]։

---

16 Նույն տեղում։
17 Նույն տեղում, հ. II, էջ 260։
18 Նույն տեղում, հ. I, էջ 393։
19 Նույն տեղում, էջ 473։
20 Նույն տեղում, հ. II, էջ 302, 303։
21 Նույն տեղում, էջ 305։
22 В. Г. Белинский, Собр. соч., М., 1948, т. III, էջ 663։
23 Մ. Նալբանդյան, նշվ. հ. II, էջ 258, 259։

Այս հարցերին նա անդրադառնում է նաև «Աշխարհաբարի քերականության» ներածությունում և այլ հոդվածներում։ «Ազգ ասելով,— գրում է Նալբանդյանը,— չենք իմանում այն մի քանի մարդիկը, որը արծաթի սանդուղով վեր կին բարձրացել ազգի մակերևույթից, այլ այն խեղճ և կարեկցության արժանի ժողովուրդը, որի վերա ծանրացել է ազգային ապաբախտության հետևանքը»[24]։ «Օ՜հ, ո՞րքան հարուստ է այս աղքատությունը»— բացականչում էր Նալբանդյանը[25]։

Իր «Հիշատակարանում» Նալբանդյանը տրտմությամբ փաստարկում էր, որ «մեր ազգության մեքենան», այսինքն հասարակ ժողովուրդը, «ջարդված է»[26]։ Եվ որ «ազգության մեքենայի—հասարակ ժողովրդի վերականգնությունը հնարավոր էր միայն գիտակցություն տնկելով նորա մեջ։ Իսկ գիտակցությունը բխում է լուսավորությունից»։ Մարդու ազատությունը նա պայմանավորում էր նաև լուսավորությամբ. «Ստրկության մեջ, աղքատության մեջ,— գրում էր նա,—չկա և չէ կարող լինել լուսավորություն»[27]։ Այստեղ Մ. Նալբանդյանը կարծես թե կրկնում էր ռուսական հեղափոխական-ազատագրական շարժման նախահայր Ա. Ռադիշչևին, որը գրում էր, թե «ազատության ոգին միայն ստրուկների մեջ է սմկում»։

Լուսավորությունը, ի տարբերություն իրեն նախորդող լուսավորիչների, Նալբանդյանը կապում էր հասարակության հեղափոխական վերափոխման հետ, որը, ինչպես առիթ ունեցանք դիտելու, նա անհնար էր համարում առանց ինքնակալության տապալման և ճորտատիրական մնացուկների վերացման։

Սեփական ազգը «մաքուր շրջանակի մեջ», «ընդհանուր մարդկության առջև» հանդես բերելու Նալբանդյանի ձգտումը պայմանավորված է եղել նրա աշխարհայացքի ինտերնացիոնալիզմով, ուրիշ ազգերի և համայն մարդկության նկատմամբ նրա հավասար հարգանքով։ Այդ ինտերնացիոնալիզմը ավելի լայն ու խոր ընդգրկում ունի, քան ժողովուրդների միջև բարեկամություն հաստատելու սոսկ քարոզն է։

Նալբանդյանի աշխարհայացքի ինտերնացիոնալիզմը դասակարգային հիմք ունի, որը պայմանավորված է եղել ռուսական կայսրության մեջ ապրող ճնշված բոլոր ժողովուրդների սոցիալական համատեղ պայքարի անհրաժեշտության գիտակցությամբ։ Հայ իրականության մեջ առաջինը նա հասկացավ, որ ազգային հարցի լուծումը կախված է սոցիալական վերափոխություններից։

Ազգային հարցի ճիշտ ըմբռնումը Նալբանդյանին հնարավորություն տվեց գիտակցելու ցարիզմի կողմից ճնշված հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ճորտատիրական իրավունքի և ինքնակալության դեմ ռուս ժողովրդի կողմից մղվող ազատագրական պայքարի հետ միավորելու պատմական անհրաժեշտությունը։ Այդ էր պատճառը, որ ցարիզմի դեմ իր ամբողջ հասակով ծառացած Նալբանդյանը հայ երիտասարդության համակրանքը ուղղում էր դեպի ռուսական հեղափոխությունը, որի հաղթանակով էր նա պայմանավորում նաև իր սեփական ժողովրդի վերարթնացման երաշխիքը։ «Ռու-

24 Նույն տեղում, հ. I, էջ 452։
25 Նույն տեղում, հ. II, էջ 258։
26 Նույն տեղում, հ. I, էջ 453։
27 Նույն տեղում, հ. III, էջ 72։

սիո մեջ խմորված ազատությունը,— գրում էր Նալբանդյանը 1862 թ.,— համարձակ կարելի է մարդկության ազատություն անվանել, վասնզի ազատությունը հողի վրա կհիմնվի, քանզի ոչ միայն ինքը ռուսը կուզե իր ազատությունը... Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության պատմության վերաբերությամբ, մե՞ծ խորհուրդ ունի»[28]։ Հենց դրանով Նալբանդյանը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը կամրջում էր ռուս ժողովրդի ազատագրական պայքարի հետ։

Նալբանդյանը արևմտահայերի բախտը ևս կապում էր Ռուսաստանի հետ։ Ընդգծելով, որ «հայերը ամբողջ Թյուրքիայում տրամադրված են Ռուսաստանի օգտին», նա գրում էր. «Հայ ազգը Թուրք փաշաների կամայականությունից ազատելու համար» անհրաժեշտ է Թուրքիայում տարածել «Ռուսաստանի բարոյական ազդեցությունը»[29]։

Նալբանդյանն այն միտքն է արծարծել, թե որևէ ազգ չի կարող իրեն ազատ համարել, եթե ինքը սոցիալապես ազատ չի և ճնշում է մի այլ ազգի։ Ծաղրելով «ազատության, հավասարության և եղբայրության» բուրժուական ըմբռնումը, նա ընդգծում էր, որ մարդը (ինչպես և ամբողջ ազգը) չի կարող ազատ լինել, «եթե ինքը այնուհետև պիտի բռնանա յուր ընկերի վրա»։ Այս միտքը Նալբանդյանն արտահայտել է 1862 թ.։ Այդ նույն միտքն ընդգծել է նաև Ֆ. Էնգելսը. «ազատ չի կարող լինել մի ժողովուրդ, որը ճնշում է ուրիշ ժողովուրդների»[30]։

Կալվածատիրական հողատիրությունը Նալբանդյանը համարում էր դողություն, ավազակություն, հափշտակություն։ Իվ «քանի որ տնտեսական խնդիրը—այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծված չէ, հասարակությունը յուր ընկերական և ընտանեկան հարաբերությանց մեջ ազատ չէ»[31]։ Նալբանդյանի այս մտքի ուշադիր ունկնդիրը չի կարող չնկատել, որ սա արդեն հասարակական հարաբերությունների՝ անվերապահորեն մատերիալիստական ըմբռնումն է։ Այս դիրքերից է նա բացատրում նաև բուրժուական ազգայնականության առաջացման սոցիալական արմատները։ Նա գրում է. «Մասնավորության (արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականության—Գ. Գ.) կորստական հոգին վաղուց ահա թագավորել է մեր ազգի անդամների վրա»[32]։ Այդ «կորստական հոգին», որն է ազգայնական էգոիզմը, ազգերի միջից արմատախիլ անելու միակ միջոցը Նալբանդյանը համարում էր սոցիալական հավասարությունը՝ յուրաքանչյուր ազգի ներսում և ազգերի իրավահավասարությունը՝ նրանց փոխհարաբերություններում։ «Ոչ մի ազգություն իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգության,— գրում է նա,— բայց այս բանը ստեպ կրկնվում է մարդկության պատմության մեջ։ Այստեղ է ահա մասնավորության չարաչար գործադրությունը, այս բանի մեջ է եսականության անսուրբ տարրը։ Արդարությունը պահանջում է խոստովանել ամենայն ազգություն, այո՛, ամենայն ազգություն,

---

28 Նույն տեղում, էջ 61։

29 Նույն տեղում, հ. II, էջ 357, 358։

30 Հ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, Պրոլետարական ինտերնացիոնալիզմի մասին. Երևան, 1960, էջ 208։

31 Մ. Նալբանդյան, նշվ., հ. III, էջ 56։

32 Նույն տեղում, հ. II, էջ 259։

որովհետև նոցա միավորությունից բաղկանում է ընդհանուր մարդկության կազմվածքը»։ Նալբանդյանի սրտին խորթ էր սեփական ազգի շահերը ուրիշ ազգերի շահերից վեր դասելը։ «Թո՛ղ ամենայն ազգ պահպանե յուր ազգության կերպարանքը,— գրում էր նա,— թո՛ղ ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգություն մարդկեղեն աշխարհի մեջ. դոքա միայն զորություն և հոգի են տալիս ազգերի ընդհանուր աշխատությանը»[33]։

Ազգերի իրավահավասարությանը հասնելու միակ միջոցը Նալբանդյանը համարում էր բռնակալական պետությունների ոչնչացումը և բոլոր ժողովուրդների սոցիալական ազատագրումը։ «Այո,— գրում էր նա,— եթե հավասար իրավունքը այսօր խոստովանվի բոլոր երկրագունդի վրա, եթե ներկա եղած պետական համակարգությունը այսօր ոչնչանան, վաղը ոչ միայն չէ մնում ազգության խնդիրը, այլ հարկավոր ևս չէ»[34]։

XIX դ. կեսերին, ազգային բուրժուական շարժումների դարաշրջանում, հայ իրականության մեջ դասակարգային պայքարի առկայության փաստը՝ որպես երկու պատմական տենդենցների, որպես երկու պատմական ուժերի պայքարի, առաջինը նկատել է Նալբանդյանը. «Այս բոպեիս,— գրել է նա 1858 թ.,— և մեր ազգի մեջ երևում է մի մտավորական պատերազմ, նույնպես միմյանց զարկվում են մտքեր...

Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղություններ, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ... Օրհնյա՛լ է պատերազմը, թո՛ղ լինի նա հզոր, անխնա...»[35]։

Այդ պատերազմում Նալբանդյանը կանգնեց աշխատավոր ժողովրդի՝ գյուղացիական լայն զանգվածների շահերի պաշտպանության դիրքերում և իր գրիչը չնվիրեց հարստահարողներին, որոնց նա համարում էր «հավիտենական ամոթի ժառանգ»[36] և որոնք «յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ»[37]։

Նալբանդյանին վիճակված էր երկճակատ պայքար մղել համապետական ռեակցիայի և ցարիզմի կառքին լծված ազգային ռեակցիայի դեմ։ Այդ պայքարում նրան հույս էին ներշնչում Եվրոպայում ծավալված հեղափոխական շարժումները և Ռուսաստանում առաջացած հեղափոխական իրադրությունը։ «Չէ,— հաճությամբ նկատում էր նա,— և եղանակները փոխվում են և ինքը երկրագունդը ենթարկվում է հեղափոխությունների, որի հետ անտարակույս կապակից էին նորա շրջապատի հեղափոխությունքը։ Զարմանալի ժամանակ է մեր ժամանակը, ասես թե այս փոփոխությունքը սկսած են արդեն, ասես թե մեզ էր պահված վկա գտնվիլ դորա սկզբին...»[38]։ Իսկ երբ հեղափոխական իրադրությունը չհանգեցրեց հեղափոխության հաղթանակի, Նալբանդյանը չընկրկեց սկսված ռեակցիայի առաջ։ Ազատության մեծ երգիչը խորապես գիտակցում էր, որ՝

---

33 Նույն տեղում։
34 Նույն տեղում, հ. III, էջ 81։
35 Նույն տեղում, հ. II, էջ 262, 263։
36 Նույն տեղում, հ. I, էջ 385։
37 Նույն տեղում, հ. III, էջ 23։
38 Նույն տեղում, հ. I, էջ 396։

Ազատություն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է,

որ ազատությունը որպես շնորհ չեն ստանում, այլ նվաճում են ժողովրդի արյունով։ «Մեզ այս նպատակին հասնելու համար,— գրում էր Նալբանդյանը,— չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլ և զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել ու սրբել մեր արյունով։

Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսնում ենք ազգի փրկությունը»[39]։

Նալբանդյանի և նրա անդրկովկասյան կուսակիցների այս ռադիկալիզմը չէ՞ր արդյոք, որ հավատ էր ներշնչել ռուս հեղափոխական դեմոկրատներին, թե ցարիզմի դեմ բարձրացող համաժողովրդական պայքարում, Ն. Օգարյովի խոսքերով ասած, «Կովկասը թիկունքում միշտ էլ հավատարիմ դաշնակից կլինի»։

Նալբանդյանին, սակայն, բախտ չվիճակվեց ապրել մինչև այդ օրը։ Նրա տակավին երիտասարդ կյանքի թելը կտրեց ցարական բռնակալների կացինը։

Ն. Դոբրոլյուբովը պատմական մեծ գործիչների դերը նմանեցնում էր բարեբեր անձրևին, որը թարմացնում է հողը, բայց ինքը ծագում է նույն հողից բարձրացող գոլորշիացումից։ Նալբանդյանը հենց այդ տիպի գործիչ էր, որին անսահմանորեն պարտական է հայ ժողովուրդը, քանզի նա ոչ միայն որպես բարեբեր անձրև թարմացրեց իր ժողովրդի ծարավի կարոտ հողը, այլև սեփական արյունով պարարտացրեց այն, մեծապես նպաստելով այդ հողից բարձրացող առողջ ծիլերի ծաղկմանը։

ИНТЕРНАЦИОНАЛИЗМ МИРОВОЗЗРЕНИЯ МИКАЕЛА НАЛБАНДЯНА

ГАЛУСТ ГАЛОЯН
Член-корр. АН Арм. ССР

Резюме

С присоединением Восточной Армении к России под благотворным влиянием передовой русской культуры интенсивно развивалась также общественно-политическая мысль в Армении. В 50—60-е годы XIX в. шла борьба между буржуазным либерализмом и революционной демократией. Налбандян считал себя последователем Чернышевского, бескомпромиссно стоял на позициях революционной демократии. В основе его мировоззрения лежал интернационализм. Он глубоко понимал, что без разрешения социального вопроса нельзя решить и национальный вопрос, поэтому главным условием победы национально-освобо-

---

39 Նույն տեղում, հ. III, էջ 24։

дительной борьбы своего народа считал победу крестьянской революции в России.

«Возрождающуюся в России свободу—смело можно назвать свободой человечества»,—писал Налбандян.

Выступая за сближение и расцвет всех наций и народностей, Налбандян не ставил интересы своей нации выше интересов других наций. Защищая чувство национальной гордости, он в то же время резко выступал против национального чванства и национального эгоизма. И просвещение народа он связывал с его социальным освобождением. Глубокие и последовательные идеи революционного демократа, дальновидного вождя народной революции М. Налбандяна стали знаменем грядущих поколений в их борьбе за социальное и национальное освобождение.